

ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գեղարվեստական գրականության թարգմանության առանձնահատկությունները և դժվարությունները բազմաթիվ են: Այդ դժվարություններից մեկը իրականությունների թարգմանությունն է: Այդ դժվարությունները հաղթահարելու համար թարգմանիչը նախ պետք է պարզաբանի «իրականություն» տերմինի սահմանումը և սահմանազատի մայրենի և օտար լեզուների իրականությունները: Ահա այս խնդիրներն են ծառանում թարգմանչի առաջ իրականությունները թարգմանելուց, նախքան նրանց համարժեքները գտնելը: Ինչ վերաբերում է իրականությունների սահմանմանը, ապա այն դեռևս վիճելի հարց է:

Որպես ազգային ինքնատիպ կոլորիտի տարրեր, իրականությունների մասին սկսել են խոսել միայն 20-րդ դարի 50-ականների սկզբին: Դրանց սահմանումը փորձել է տալ Լ.Ն. Սոլովյովը, այդ մասին գրել է նաև Գ.Վ. Զերնովը՝ դրանք անվանելով նաև «իրենց համարժեքը չունեցող բառային միավորներ», Տ.Ե. Սուլայրոնը անդրադարձել է իրականություններին՝ դրանք անվանելով «էկզոտիզմներ» կամ «էկզոտիկ բառապաշար»: Ինչ վերաբերում է «իրականության» տերմինի լատիներենից թարգմանությանը, ապա *realias* (հոգնակի *realia*) նշանակում է «նյութական», «իրական»: Արդեն բառարանային բացատրությունում այն տրվում է որպես «նյութական մշակույթի առարկա», իսկ թարգմանության տեսության մեջ այդ բառը նշանակում է մի տերմին, որով կոչում են առարկաները, այսինքն՝ իրականությունները: Շատ հաճախ շփոթվում են «տերմին» և «իրականություն» հասկացությունները: Անշուշտ, այս երկու երևույթներն ունեն բազմաթիվ մամուլություններ. նրանք երկուսն էլ չունեն հոմանիշներ, երկուսն էլ արտահայտում են հստակ երևույթներ, հասկացություններ և առարկաներ, և կան նաև այնպիսիները, որոնք կարելի է համարել և՛ տերմին, և՛ իրականություն: Այնուամենայնիվ, դրանց միջև առկա են նաև տարբերություններ. եթե իրականությունները ներկայացնում են «անհամարժեք բառապաշար», ապա «տերմինները» ունեն իրենց հաստատուն համարժեքները գրեթե բոլոր լեզուներում: «Տերմինը եմթալեզվական տարր է՝ զուրկ ազգային և/կամ պատմական երանգավորումից, որը մեծավ մասամբ անվանողական դեր է կատարում և, հայտնվելով այլ ժանրի տեքստում, դառնում է այս կամ այն ոճաբանական խնդիրների իրականացման միջոց: Իսկ իրականությունն ավելի շատ կապված է գեղարվեստական գրականության հետ, որտեղ ներկայանում է

որպես տարածքային և ժամանակային կոլորիտի /երանգավորման/ ստեղծման միջոցներից մեկը. գիտական տեքստում իրակությունները շատ հաճախ կատարում են սովորական տերմինի դեր»:¹

Ըստ Ս. Վլախովի՝ իրակությունները «անհամարժեք բառապաշարի» մի մասն են՝ որպես մի ինքնուրույն խումբ: Լեզվաբաններից շատերը իրակությունների թվին են դասում ազգային կենցաղի և բարքերի առանձնահատկությունները, մյուսները՝ երկրի հասարակական և մշակութային կյանքի երևույթները, աշխարհագրական և պատմական տվյալները, գրական կերպարներին և այլն: Ուստի, այս ամենից ելնելով, կարելի է ենթադրել, որ իրակությունները լրիվ համարժեք չեն ո՛չ «անհամարժեք», ո՛չ «էկզոտիկ» բառապաշարին և ոչ էլ տերմիններին: Իրակությունները կարելի է համարել լրիվ ինքնուրույն երևույթներ: Այս ինքնավար երևույթներն ունեն իրենց թարգմանության դժվարությունները և առանձնահատկությունները գեղարվեստական գրականության մեջ:

Ըստ Ս. Վլախովի՝ իրակությունները, որպես կանոն, չեն թարգմանվում: Այնուամենայնիվ, դրանց թարգմանության մեջ զուլություն ունեն երկու հիմնական դժվարություններ, որոնք պայմանավորված են. 1. թարգմանող լեզվում համարժեքի բացակայությամբ, 2. իմաստ արտահայտելով՝ ազգային և պատմական կոլորիտի պահպանման խնդրով:

Տարբեր դեպքերում թարգմանիչը այդ խնդիրներին տալիս է տարբեր լուծումներ: Կան իրակությունները բացահայտելու և ներկայացնելու մի քանի տարբերակներ՝ բացատրական, միջանկյալ և ծանոթագրական: Առաջինի դեպքում թարգմանիչը նախընտրում է թարգմանությանը զուգահեռ տեքստում տալ բառի բացատրությունը: Այս դեպքում, եթե հեղինակը բնագրում չի տվել նման բացատրություն, թարգմանիչը, փաստորեն, մի փոքր շեղվում է բնագրից: Երկրորդի դեպքում բացատրությունը տրվում է պարզապես փակագծերում: Երրորդ դեպքում տրվում է ծանոթագրությամբ, որն իր հերթին կարող է տրվել յուրաքանչյուր էջի վերջում կամ գրքի վերջում:

Ս. Վլախովը գեղարվեստական գրականության մեջ իրակությունների փոխանցման միջոցները դասակարգում է հետևյալ կերպ.

1. հնչյունադարձում /և տառադարձում/ (տրանսկրիպցիա, տրանսլիտերացիա)
2. թարգմանություն / փոխանցում/:
 - 1.1 նորաբանություն. ա/ պատճենում, բ/ կիսապատճենում, գ/ յուրացում, դ/ իմաստաբանական նորաբանություն:
 - 2.2 իրակությունների փոխարինում,
 - 2.3 մոտավոր թարգմանություն. ա/ ոճական-կերպային փոխարինում, բ/ ֆունկցիոնալ համանմանություն, գ/ նկարագրություն, բացատրություն, պարզաբանում:
 - 2.4 համարժեքային թարգմանություն:

Վերջինիս հաջողված օրինակ է ներկայացնում Ա.Ղ. Շվեյցերը ուղեգիր /путевка/ ոռուսերեն իրակության անգլերեն թարգմանությամբ. "Сколько стоят путевка на советский курорт?" "How much are accommodations at Soviet health resorts?", այսինքն՝ հիմնական թիրախը՝ իրակությունը չի թարգմանվել:²

Սակայն, ըստ Ս. Վլախովի՝ նման դեպքում թարգմանությունը տուժում է: Ինչ վերաբերում է համատեքստային և բառարանային թարգմանությունների հակադրությանը, ապա ըստ Յա.Ի. Ռեցկերի՝ «իմաստային զարգացումը թարգմանության ընթացքում բառարանային համարժեքի փոխարինումն է համատեքստայինով, որոնք բնականորեն կապված են միմյանց հետ»:³

Իրակությունների թարգմանության վերոհիշյալ մեթոդներն ընտրելիս թարգմանիչը պետք է հաշվի առնի իրակության կարևորության աստիճանը տվյալ համատեքստում և ընթերցողի ուշադրությունն անհարկի չչեղի կարևորից ավելի պակաս կարևորին: Նա նաև պետք է հաշվի առնի ստեղծագործության ժանրը և ընթերցողների միջին մակարդակը: Իրակությունները դասակարգվում են ոչ միայն ըստ նրանց փոխանցման միջոցների ընտրության, այլև ըստ նրանց բնույթի: Իրակությունները լինում են տարբեր բնույթի՝ դիցաբանական, աստվածաշնչյան, աշխարհագրական, պատմական, առօրյա կենցաղային, կարելի է նաև նշել թևավոր խոսքերը: Նման տիպի իրակությունները թարգմանելիս առաջանում են մի շարք դժվարություններ:

Գեղարվեստական գրականության մեջ հեղինակային խոսքաշարում եղած տարբեր բնույթի մեջբերումները, թևավոր խոսքերը (դիցաբանական, աստվածաշնչյան, այլ հեղինակներից) կարող են ընթերցողների մի խմբին հայտնի լինել, իսկ մյուսին՝ ոչ: Մի ազգի մոտ կարող են այդ մեջբերումները տարածված լինել, մյուսին՝ լրիվ անծանոթ: Նման դեպքերում թարգմանչի խնդիրն է ծանոթագրությամբ, միջանկյալ բացատրությամբ կամ զուտ բացատրական թարգմանությամբ միտքը պարզ դարձնել ընթերցողի համար: Գոյություն ունեն մեջբերումների և թևավոր խոսքերի մի շարք բառարաններ, որոնք կօգնեն թարգմանչին՝ բնագրում բացատրության բացակայության դեպքում:

Իրակությունների առանձնահատկությունների և դրանց թարգմանության դժվարությունների հետ թարգմանիչը բախվում է նաև այլ ժամանակաշրջանի ստեղծագործություններ թարգմանելիս: Երբ բնագիրը գրված է, օրինակ, շատ վաղ ժամանակաշրջանում և բազմաթիվ երևույթներ, որոնք տարածված և սովորական են եղել այդ ժամանակի հասարակության համար, ապա ժամանակակից ընթերցողին այդ երևույթները, բառերը և արտահայտությունները կարող են խորթ և անհասկանալի թվալ: Նույնիսկ այն դեպքում, երբ թարգմանված լեզվում այդ բառն ունի իր ճշգրիտ տարբերակը, այն հաճախ ծանոթագրության կարիք ունի, քանզի ժամանակակից ընթերցողին այդ

«հնացած» բառը կարող է ոչինչ չասել և պարզապես բառի ճշգրիտ թարգմանությունը կկորցնի իր իմաստը:

Ըստ Ա.Գ. Ֆյոդորովի՝ «պատմական, «հնացած» իրականությունների բացահայտման նպատակն է ժամանակակից ընթերցողին ծանոթացնել տվյալ գեղարվեստական հուշարձանին, որը իր կերտման ժամանակ, այսինքն՝ իր ժամանակաշրջանի ընթերցողի համար նույնպես եղել է ժամանակակից»:⁴ Հատուկ անունների թարգմանությունը նույնպես շատ հաճախ ծանոթագրության կարիք ունի, բայց դրանք կարող են լինել տարբեր բնույթի: Կան, օրինակ, աշխարհագրական անուններ, որոնք կարող են ընդհանրապես հայտնի չլինել ընթերցողին, այս դեպքում անհրաժեշտ է ծանոթագրել դրանք: Լինում են նաև դեպքեր, երբ միևնույն աշխարհագրական վայրը տարբեր երկրներում անվանվում է տարբեր ձևերով: Օրինակ՝ Հայաստանի համար Մերձավոր Արևելքը Անգլիայում կոչվում է Միջին Արևելք (Middle East), իսկ Հնդկաստանում՝ Արևմտյան Ասիա (Western Asia): Նման դեպքում թարգմանիչն ունի երկու ընտրություն. ոչ թե թարգմանել արտահայտությունը, այլ միանգամից գրել տվյալ երկրում այդ տեղանքին տրվող անվանումը կամ նախ բառացի թարգմանել անվանումը, այնուհետև՝ ծանոթագրությամբ տալ թարգմանող լեզվի երկրում եղած համարժեքը: Հատուկ անունների մեջ դժվարություն են ներկայացնում նաև հեքիաթային և առասպելական կերպարների փոխանցումը թարգմանող լեզու: Ինչպես օրինակ՝ Բաբա-Յագա, Կոշչեյ-անմահ կերպարները, որոնք քաջ հայտնի են խորհրդային ընթերցողին, բայց ոչ արտերկրում: Թարգմանական դժվարություններ ծագում են են նաև այն դեպքում, երբ թարգմանող լեզվում գոյություն չունեն այս կամ այն հասկացությունները, իրերը, առարկաները, հետևաբար թարգմանիչը երկար փնտրտուքներից հետո որևէ կերպ չգտնելով իր ուզածը, կամ պետք է հորինի դրա համարժեքը կամ հնչյունադարձումով տա անվանումը, այնուհետև ծանոթագրության որևէ ձևով պարզաբանի այն: Այս խնդիրը ծագում է երկրների միջև եղած բազում տարբերություններից. սկսած աշխարհագրական դիրքից և կլիմայից, վերջացած բարձրորդ և սովորույթներով: Օրինակ, "Banns" եզրը, որը անգլերեն-հայերեն բառարանում նույնիսկ չի էլ թարգմանված, անգլերեն-անգլերեն բացատրական բառարանում բացատրված է հետևյալ կերպ.

Banns – public announcement in church that two people intend to marry each other (եկեղեցում հարապարակա՛վ հայտարարություն, որ երկուսը մտադրված են ամուսնանալ):

Նման սովորություն կամ երևույթ, օրինակ, հայ իրականության մեջ գոյություն չունի: Ուստի, այս դեպքում նպատակահարմար է ոչ թե համարժեք փնտրել, այլ՝ հնչյունադարձել տերմինը հայերեն և ծանոթագրությամբ պարզաբանել այն: Սովորությունների հետ կապված թարգմանական դժվարություն են

ներկայացնում մաս ազգային փաղաքշական մի շարք արտահայտություններ: Օրինակ, ֆրանսերենում ընդունված *mon petit chou* (իմ փոքրիկ կաղամբիկ) արտահայտությունը հայ ընթերցողին, անկասկած, ծիծաղելի կթվա: Այս դեպքում թարգմանիչը նորից կանգնած է բարդ ընտրության առջև. բառացի թարգմանել, այնուհետև բացատրել, որ դա տվյալ երկրում ընդունված արտահայտություն է, թե՞ գտնել թարգմանող լեզվում գոյություն ունեցող գեղեցիկ և հասկանալի համարժեքը:

Ելնելով վերոհիշյալ բոլոր դժվարություններից՝ իրականությունների կարելի է դասակարգել ըստ մի քանի սկզբունքների: Նախ ըստ առարկայական դասակարգման. աշխարհագրական (սրանց մեջ մտնում են այս կամ այն երկրի սովորույթները, մշակույթը, ֆուկլորը, տոները, չափման միավորները, դրամը և այլն), հասարակական-քաղաքական (տվյալ ժողովրդի տարածքային և վարչական միավորները, պաշտոնները):

Իրականությունները կարող են դասակարգվել մաս ըստ շրջանների և նույնիսկ բացատրության կարիք ունենալ բնագրում: Իրականությունները կարող են լինել շատ նեղ տարածքային: Ասենք ԱՄՆ-ի որևէ մահամզի բարբառով մի բառը կամ ասույթը, որը ամերիկյան գրողը ինքն է պարզաբանել անգլիալեզու մյուս ընթերցողների համար: Թարգմանիչը հնչյունադարձում է բառը և թարգմանում հեղինակի ծանոթագրությունը:

Կան մաս իրականություններ, որոնք կարելի է համարել ժամանակավոր, քանզի շատ հաճախ դրանցից ոմանք ժամանակի ընթացքում ձեռք են բերում միջազգային համբավ և դադարում իրականություն լինելուց: Այս դեպքում կարելի է համաձայնել Ավիկ Իսահակյանի այն կարծիքին, որ «ժամանակի հետ թարգմանությունը ինչ-որ չափով հնանում է: Դասական երկը, գրական կոթողը չի հնանում, իսկ նրա թարգմանությունը որոշ ժամանակ անց հնանում է»: ⁵

Այսպիսով, թարգմանչական դժվարություններն առավել նկատելի են իրականությունների թարգմանության ժամանակ, և դա բնական է, քանի որ վերջիններս յուրաքանչյուր ժողովրդի ազգային կոլորիտը և լեզվամտածողությունը ներկայացնող հիմնական միավորներից են: Վերոշարադրյալից կարելի է հանգել այն մտքին, որ դրանց թարգմանության բարդությունը իրականության՝ բնագրի լեզվից թարգմանող լեզու փոխանցելու առաջարկված բազմաթիվ ուղիներից մեկի ճիշտ ընտրության մեջ է:

1. Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М. Высшая школа, 1986, с.50.

2. Швейцер А.Д., Перевод и лингвистика, М., Воениздат, 1973, с.53.

3. Рецкер Я.И., Пособие по переводу с английского языка на русский. У2-М., Изд. Высшая школа, 1965, с. 45.

4. Федоров А.В., Основы общей теории перевода, Изд.3, М., 1983, с. 285

5. Իսահակյան Ավ. «Թարգմանության արդիականությունը», Պոեզիայի ապագան թարգմանության միջոցով, Միջազգային գիտաժողով, Երևան, 2003թ., էջ 52